որս և Եկեղեցի Ս. Աստուածածնի և Պատրիարքարանն։ Զայս տեսեալ երկուց Պատրիարքաց՝ գրեթէ յուսահատեցան յառաջադրութենէ իւրեանց. զի ոչ գիտէին՝ թէ յինչ ձեռն արկանիցեն, 'ի պա՞տսն Երուսաղէմի՝ թէ 'ի շինութիւն Եկեղեցւոյն. քանզի անհամար ծախք պիտոյ էին վասն հրաման առնլոյ յարքունուստ առ 'ի շինել զայն, և անհամար ծախք եւս առ 'ի դնել զնիւթսն՝ և 'ի կատար հասուցանել զշինուածն։ Բայց այսու ամենայնիւ յուսացեալ 'ի խնամս Ս. Աստուածածնի, ջանացան և առին ըզհրամանն՝ և շինեցին զայն. անձամբ անձին ընդ գործաւորս աշխատելով 'ի մէջ հողոյ և փոշւոյ, որոց ձեռնտու եղեն յամենայն իրս Ակնցի Սեղբոս Ամիրայն, Կեսարացի Մելիտոնն և Յարութիւնն և Սարգիս Գալֆայն։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Նորոգութիւն գմբեթի տաճարին Ս. Յարութեան, և բաժնի Լատինաց։ Նորոգել Յունաց զբաժին տեղիս իւրեանց. Քննութիւն նորոգութեանց։ Նորոգութիւն բաժնին Հայոց 'ի տաճարի անդ։ Վէճ Յունաց ընդ Հայոց սակս հանդիսի լուսաւորութեան։ Այլազգիք Սիոնի. Դատաստանք գիւղականացն Բեթղեհէմի։

Այլ մինչդեռ պարապեալ էին Գրիգոր և Յովհաննէս վարդապետք 'ի գործ շինութեան Եկեղեցւոյն Ս. Աստուածածնի, Դեսպանն Գաղղիոյ մատոյց գիր աղաչանաց առ Սուլթան Ահմէտ Գ. և խնդրեաց հրովարտակ 'ի նըմանէ՝ նորոգել զմեծ գմբեթն տաճարին Ս. Յարութեան, եւ զայլ բաժին տեղիս իւրեանց՝ եւ զընակարանս Լատին կղերաց։ Զայս զգացեալ Յունաց՝ դիմեցին եւ նոքա 'ի Դուռն և խնդրեցին հրաման ինքեանք եւս նորոգել ըզբաժին տեղիս իւրեանց 'ի տաճարի անդ։ Առաքեցաւ խնդիրն յատեան մեծի դենպէտի և դասուց դիտնականաց, և հարցաւ 'ի նոցանէ թէ՝ ներե՞ն արդեօք օրէնք Իսլամայ՝ տալ հրաման Քրիստոնէից նորոգել զեկեղեցիս իւրեանց։ Եւ վճիռ յատեանէ անտի այսպէս. « Նորոգել միայն 'ի վերայ նախնական դրից, չառնել 'ի նմա զաւելի իրս